

ՃԱՌ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ *).

« Աստուծոյ սուրբ Հոգին մի տրամեցնէք, որով դուք կնքուեցաք փրկութեան օրուայ համար » :

Պօղոս առաքելոյ այս խօսքերն ասելովս, ես չեմ կասկածում, եղբայրք, ձեր՝ սուրբ Հոգւոյն հաւատալու կողմանէ: Մենք Յովհաննէս Մկրտչի աշակերտները չենք, որոնք ասումէին թէ՝ « Դե՛ս, լա՛ծ էլ չէ՛ս, ո՛ր ո՞րք է՛ք Հոգի կոչ » : Մենք Քրիստոսի աշակերտներն ենք, մեզ անկարելի է չիմանալ Նորա մասին, — մենք մկրտուած ենք երեքանձնեայ Աստուծոյ անունով, այսինքն է՝ Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ:

Սորա հետ միասին ես անտարակոյս եմ ձեր պատրաստակաւ նութեան կողմանէ ընդունելու սուրբ առաքելոյ տուած բարի խորհուրդը: Նա այդ խորհուրդը տալով Նփեսացի քրիստոնեաներին, տուել է միանգամայն այն և մեզ բոլորիս, որ նոցա հետ միւսնոյն փրկութեան օրն ունինք, և որ նոցա հետ ստացել ենք Աստուծոյ նոյն հոգին:

Ներկայ օրս տօնում ենք, եղբայրք, սուրբ Հոգւոյ յիսուներորդ օրն իջնելը սուրբ Առաքելոց վերայ հրեղէն լեզուների կերպարանքով: Կցենք մեր փառաբանութեան հետ և մեր խորհրդածութիւնը սուրբ Հոգւոյ հաւատացելոց մէջ լինելու մասին, և համոզուինք, որ անհրաժեշտ է առաքելոյ տուած խրատն ու յորդորը կատարելու:

Տէրն մեր Յիսուս Քրիստոս, բաժանուելով իւր աշակերտներից, ասաց. « Ես էլ Հօրը պիտի աղաչեմ » — « ո՛րք Դե՛մարել պիտի պայքել » : « Եր յա՛նքեան յեղ հե՛տ բնա՛լի » : Խոստացածը կատարուեց, — մխիթարիչը տրուեց բայց չկատարուեց այն, որ Նա յաւիտեան նորանց հետ լինէր, ինչու որ, իւր աշակերտներ

(*) Այս ճառը ասել է 1837 թուին Նովգորոդի և Ս. Պետերբուրգի Ռուսաց մետրոպոլիտ Նիկանոր, քաջաքարոզ, գիտնական և բազմօք բարեգործ արքեպիսկոպոսն, որ ծնել է 1787 թուին և իւր բազմարդիւն կեանքը կնքել է 1856 ին. Սա թողել է իւր մահից յետոյ շատ ատենաբանական, գիտնական գրուածներ և աստուածահաճոյ գործեր, որ Ռուսաց տէրութեան, եկեղեցւոյ և ազգի համար յոյժ արգասաւոր են և գնահատելի:

րին, մէկին միւսի ետեւից կանչեց Տէրը այս աշխարհիցս իւր մօտ: Աւրեմն ի՞նչ է նշանակում յաւիտեան խօսքը: Ի՞նչ միտք ունի Փրկչի այդ խոստումը: Այդ խոստումն այն նշանակութիւնն ունի, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս խոստացաւ խնդրել իւր Հօրից մխիթարիչ սուրբ Հոգին ոչ միայն առաքելոց համար, այլ և ամեն ժամանակների ու ամեն տեղերի հաւատացեալ քրիստոնեայ ժողովրդոց համար, այդ պատճառով էլ ասաց.

« Պիտի բնակի յեղ հեփ յաւիտեան » :

Ճշմարիտ է, սուրբ Հոգւոյ իջման սպասող 120 հոգւոյ մէջ Տիրոջ խոստման համեմատ, Պօղոս առաքեալը նոցա մէջ չկար. բայց ի՞նչ է ասում նա իւր և իւր աշխատակիցների մասին: Նա ասում է. « Իսկ ձեռք ո՛ւն թէ այս աշխարհին հօգին առաւել, այլ այն Հօգին, որ Աստուծանիցն է » : Ո՞րտեղ սովորեցին նոքա այն իմաստութիւնն, որ քարոզում էին: Իսկ ձեռք, պատասխանում է սուրբ առաքեալը, յայտնեց Աստուծոյ իւր սուրբ Հօգւոյն: Ի՞նչպէս է պատասխանում իւր խօսքի ճշմարտութեան մասին. — « Խօսում էնք, ո՛ւն թէ հարդիւն իմաստութեան սրբեցրած խօսքերով, այլ Հօգւոյն սրբոյ սրբեցրածներով » : Բայց դա շնորհաց ընտրութեան անօթը չէ՞ր, ինքն այդ առաքեալը չէ՞ր, Բայց ի՞նչ, նա սուրբ Հոգին միայն իրան չէ սեպհականեցնում, — Եփեսացիներին էլ է յորդորում թէ՛ « Աստուծոյ սուրբ Հօգին ձեռքով » : Եփեսացիներին էլ է պատուիրում ասելով. « Սուրբ Հօգին ձեռքով հանգչե՛ք » : Կորնթացիներին էլ է յիշեցնում ասելով. « Ձեռք իմանա՛մ, որ Աստուծոյ արմար էք դուք՝ և Աստուծոյ Հօգին յեր ձեռք է բնակած » : Իսկ ո՞ր հոգին է այդ, եթէ ոչ նոյն իսկ այն հոգին, որ խնդրեց Յիսուս իւր Հօրից և պարգևուեց առաքելոց: Փրկչին մեր Յիսուս խոստացաւ թէ՛ պիտի բնակի յեղ հեփ յաւիտեան, և իսկ որ միշտ լինում է հաւատացեալների հետ, մեզանից իւրաքանչիւրիս հետ, շնայելով ոչ սեռի, ոչ կոչման, ոչ հասակի, — ծերերն ու երիտասարդներն, ծառաներն ու աշխատողները քրիստոնէական աշխարհի մէջ բոլորն էլ կնքուած են Աստուծոյ սուրբ Հոգւով, — բոլորն էլ նորա տաճարներն են:

Սուրբ Հոգին այժմ՝ մեր օրերում չէ իջնում հաւատացեալների վերայ այնպիսի կերպով, ինչպէս որ իջաւ նա սուրբ առաքելոց վերայ Փրկչի յարութեան յիսներորդ օրը: Ինչպէս որ Աստուծոյ Որդին պէտք է երևէր աշխարհիս վերայ ծառայի

կերպարանքով միանգամ միայն, նոյնպէս էլ սուրբ Հոգին պէտք է միանգամ թափուէր հրեղէն լեզուների նմանութիւնով: Եւ ի՞նչ պէտք են մրրկանման շնչումն, երբոր Աստուծոյ սուրբ Հոգւոյ ամենահանդարտիկ վշումն էլ մեզ զգալի է: Եւ ի՞նչ պէտք են հրեղէն լեզուները, երբոր Աստուծոյ կենդանի և ներգործող կրակն արդէն բորբոքուել է աշխարհիս մէջ: Եւ ի՞նչ պէտք են այլ և այլ լեզուներով խօսելու շնորհքն, երբոր արդէն ամեն լեզուներով փառաբանում են Յիսուս Քրիստոսին: Սուրբ Հոգին մեր օրերումն իջնումէ հաւատացելոց վերայ աւազանում մրկրտուելու միջոցին սրբալոյս մեռնի օծման խորհրդով: Արդեօք ուղի՞ղ է ասածս: Ուղի՞ղ է, որովհետեւ մկրտութիւնը, ասումէ մեր Պօղոս առաքեալը, աւազանի միջոցաւ վերստին ծննդեան և սուրբ Հոգւով նորոգութեան համար լուացումն է: Ուղի՞ղ է, որովհետեւ նոյն իսկ առաքեալը հաստատումէ, որ այն ժամանակ մենք լուսաւորւում էինք, որքան էլ քիչ էր, և արքայանք էինք: Ուղի՞ղ է, որովհետեւ այն ժամանակ մենք հագած էինք լինում Քրիստոսին, և սպանում ուրիշ Հոգւոյ անհամարելի ճշմարտութիւն: Սորա համար մկրտութեան օրից, իբրեւ յաւիտենական կորստից ազատուելու օրից սկսած, Աստուծոյ Հոգին բնակւումէ մեր մէջը, իբրեւ սրբող մեր հոգիների ու մարմինների, իբրեւ առաջնորդող մեզ բոլորիս գէպի ամենայն աւսակ բարին ու երջանկութիւնը, իբրեւ զօրութիւն ու ամրութիւն պարգեւող, իբրեւ յանդիմանող մեղաց, իբրեւ մխիթարիչ՝ մեր նեղութեանց մէջ: Նղբալք, եթէ ունիք դուք եռանդն գէպի ճշմարտութիւնն ու բարին, եթէ ձգտում էք ամենայն ջանքով ձեր միտքը լուսաւորելու ու ձեր սիրտը կրթելու Քրիստոսի հաւատոյ և եկեղեցւոյ ուսումնարանում, այդ սուրբ Հոգւոյ ներկայութեան նշանն է: Երբոր բարի գործ էք անում, արդեօք ուրախութիւն զգումէք, և երբոր միջարգործ էք արել տխրութիւն զգումէք, իմացէք որ, այդ սուրբ Հոգւոյ ներգործութիւնն է: Տեսնումէք արդեօք ձեզ, որ աճում էք մեր տիրոջ Յիսուսի Քրիստոսի հաւատի մէջ, յաւիտենական երջանկութեան արժանանալու յուսոյ մէջ, և գէպի Աստուած ու ձեր ընկերն ունեցած սիրոյ մէջ: Լաւ իմացէք որ, այդ սուրբ Հոգւոյ պտուղն է: Զուենիք մենք այն գերբնական, հրաշալի ձիրքերն, որ ունէին սուրբ առաքեալներն ու մար-

գարէները: Բայց մի՞թէ ընդհանուր ձիրքերն քիչ կշիռ ունին. մի՞թէ հաւատն, որով լուսաւորել է մեզ Հոգին սուրբ, յոյսն, որով ոգւորել է մեզ, և սէրն՝ որ լցրել է մեր սրտերի մէջ, — մի՞թէ այդ տուրքերն, որոյ վերայ հաստատոււմ է բոլոր մեր փրկութիւնը, նոյնպէս Աստուծոյ շնորհաց թանկագին պարգեւները չե՞ն: Քեզ չէ կոչել Տէրը ծառայութեան ընկերներէդ. փրկութեանը առաքելական կոչմամբ սուրբ եկեղեցւոյ մէջ, ու չէ տուել քեզ առաքելոց համար հարկաւոր շնորհքները: Բայց նա հէնց քեզ է կանչել փրկուելու և ի վերուստէն պարգեւել է քեզ սորա համար կարեւոր ամենայն շնորհքները: Շնորհակալ եղիր, ընդունիր, պահիր, և գործածիր այս ամեն պարգեւները քո հոգւոյդ բարւոյն համար:

Բայց, եղբարք, սուրբ Հոգին թէև ամեն ժամանակ բնակւումէ մեր մէջ, բայց կարող է վիրաւորուել մեզանից, նոյնպէս կարող է բոլորովին մեզանից օտարանալ: Մտածենք, թէ ինչպէս անենք, որ չտրտմեցնենք Նորան, ինչպէս հոգ տանենք, որ Նորա աստուածային լոյսը չհանգցնենք:

Ինչո՞վ կտրտմի սուրբ Հոգին: Նախ՝ մեր անմաքուր մտածմունքներովն ու զգացմունքներովը: Ինչպէս որ գարշահոտութիւնը անախորժ է մեր հոտառութեան զգացմանը, նոյնպէս գարշելի մտքերն ու ցանկութիւններն անախորժ են մեր մէջը բնակուող սուրբ Հոգւոյն: Նա սրբումէ մեր սիրտն, իսկ մենք մտցնում ենք Նորա մէջ գայթակղեցուցիչ բաներ: Նա ձիւնի պէս սպիտակ է անում, իսկ մենք սևացնում ենք. Նա լուսաւորումէ, իսկ մենք խաւարեցնում ենք. Նա տաքացնումէ, իսկ մենք սառեցնում ենք: Վիրաւորիչ չէ՞ արդեօք այդ մեր արարմունքն: Երկրորդ՝ տրտմումէ դատարկաբանութիւնով. կարծես թէ մեղք բան չէ, երկու՝ երեք դատարկ խօսք ասելը: Բայց այդպիսի խօսք ասելն այնչափ մեծակշիռ է, որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս անհրաժեշտ համարեց ասել թէ՝ «Առն թի Կարի խօսքի համար, որ հարգիլի խօսում էն, Կարաւարանի օրը հաշիւ պիտի Կան. որովհետեւ +ս խօսեցիցդ Կարաւարանաւ և +ս խօսեցիցդ Կարաւարանաւ»: Կարելի՞ է արդեօք որ չտրտմի սուրբ Հոգին այնպիսի խօսքերով, որոնք վերաբերուում են Աստուծոյ ահեղ դատաստանին: Կարելի՞ է արդեօք, որ Նա չտրտմի, երբոր խորամանկ ու նենգաւոր զրոյցների մէջ մեր լեզուն

խօսումէ այն, ինչ որ մեր մտքինն ու սրտինն չէ: — Երբորդ՝ Նա տրտմումէ վատ գործերով: Եւ մի՞թէ հարկաւոր է այդ ապացուցանել, երբ որ Նա տրտմումէ մինչև անգամ մեր վատ բաներ մտածելու վերայ. բաւական է նկատել, որ առաքեալը սուրբ Հոգին չտրտմեցնելու յորդորը կարդալուց յետոյ անմիջապէս առանձին խրատ է տալիս, որ մենք ամենայն կերպով հեռանանք հոգւոյ և սրտի այդպիսի յօժարութիւնից. «Ահա դառնո՛ւնք ասումէ առաքեալը, և Բարեհո՛ւնք ու որոհո՛ւնք՝ և ազաւակ ու հայհոյո՛ւնք ահա լարո՛ւնք ներքին մեզնի մերցո՛ւնք յեղինջ. և իրարո՛ւ հեղ Ժապարհէ՛ք, Գլխով, Դիմով, Դիմով, Ինչպէս ո՛ր Աստուծո՛ւ Բարեհո՛ւնք ներքին յեղ»:

Երբ է հեռանա՞մ կամ հանգչո՞ւմ Հոգին: Երբոր մարդս անօրէնութիւնը ջրի նման է խմում, երբոր մտնումէ չարութեանց խորքն և անհոգ է մնում: Ա՛յ միտարի՛չ սուրբ Հոգի, ա՛խ, մի թողնիլ մեզ այդպիսի կորստեան վիճակին հասնել. յանդիմանիր ու խրատիր, — միայն թէ մեզ մի թողնիլ, մեզանից մի հեռանա՛լ:

Արդ, եթէ սուրբ Հոգին տրտմում է մեր անմաքուր մտքերի, խօսքերի և գործերի վերայ, ուրեմն պէտք չէ՞ արդեօք, որ մենք հսկենք մեր սրտի վերայ, որից դուրս են գալիս՝ մեր Փրկչի առածովը՝ լալ հոգի: Այն բաներ միտք անելու մէջ, ըստ երեւութին, մի մեծ մեղք չկայ. և ո՞վ է տեսնում մեր մտքինը: Մեր ներքինը տեսնողը սուրբ Հոգին է, և այնպէս է զգւում մեր արած չար մտքերից, ինչպէս որ նոյն իսկ մեր վատ գործերից: Պէտք չէ՞ արդեօք մաքրենք մեր սիրտը զղջման արտասուքով, որչափ կարելի է յաճախ. Աստուծոյ սուրբ Հոգին սիրումէ բնականել այնպիսի տաճարում, կամենում եմ ասել, այնպիսի սրտում, որ մաքուր է և բարեզարդ: Պէտք չէ՞ արդեօք, որ մենք մեր մէջ ունենանք եւ սուրբ մտածութիւն եւ սուրբ զգացմունք: — Ուրեմն, եղբարք, Աստուծոյ Հոգին մաքրութեան և սրբութեան Հոգի է, Հսկեցէ՛ք ձեր մտքերի վերայ և պահպանեցէ՛ք ձեր սիրտն աշխարհիս գայթակղութիւններից, ուշադիր եղէ՛ք շնորհաց ձիրքերի վերայ, որ սուրբ Հոգին պարգևել է ամեն մէկիս, և որով հաղորդակնութեան մէջ ենք գտնւում մեր Փրկչի հետ, և գործ ածեցէ՛ք այն ձիրքը բարի գործերի՝ Աստուծոյ փառքի համար. ահա ինչ է հաճոյ և ընդունելի սուրբ Հոգւոյն, որ գտնւումէ մեր մէջ:

« Աստուծոյ Հոգին, ասումէ մարգարէն, իմաստութեան ու հանճարի Հոգի է, իտեհրդի և զօրութեան Հոգի է, փնտութեան և աստուծոյ պաշտութեան Հոգի, Աստուծոյ երկնայի Հոգի » : Կայ արդեօք ձեր մէջ, եղբարք, գոնէ մէկն այդ ձիրքերից. եթէ ունինք, ուրեմն չդադարենք աճեցնելու Աստուծոյ ձիրքերը :

« Հոգոյ պսոսող, ասումէ Առաքեալն, է «էրը, ինքս-նի-նը, իսկապ-նի-նը, երկայնահոս-նի-նը, քաղցր-նի-նը, բար-նի-նը, հաս-տարմ-նի-նը, հեղ-նի-նը և ծո-ծկալ-նի-նը » : Կայ արդեօք մեր մէջ գոնէ մէկն այդ պսոսողներից. եթէ ունինք, ուրեմն չդադարենք աւելի և աւելի քաղմապատկել այդ պսոսողը, աճեցնել աւելի և աւելի բարձր աստիճանի հասցնելով : Թէ տուրքն և թէ նորա պսոսողը մեր մէջ բնակուող սուրբ Հոգւոյ յայտնի նշաններն են : Եւ թէ աւելի բան կայ ցանկանալու : Հաւատարիմ ու հնազանդ լինինք սուրբ Հոգւոյ առաջնորդութեամբն ու նորա տաճարները լինինք :

(Թարգմ. Ռուսերէնից) Կարապետ Տէր Յակովբեանց :

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՆԵԽՕՍԵԿԱՆ ՏԵՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՀԵՂԲԵՏԵՅ.

(Շրշ-ն-ի. Աբրա. Բ. Ե.) :

ՅՕԴՈՒԱԾ ԺԹ.

ՀՐԱՇԱԴՈՐԾ ԱԻԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՆ ՀԱՂԲԱՏԱՅ.

Մասն կենսատու խաչին Աւագ Սուրբ Նշանին Հաղբատայ է ի մասանց այնր խաչի, զոր սուրբ կոյսն Հռիփսիմէ երեք ի Հայաստան յաւուրս Տրդատայ թագաւորի մերոյ և վասն առժամանակ մնալոյ այնր խաչի ծածկեալ ի Վարազ լերին կոչեցաւ Վա-